Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Նալբանդյան համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի
29-ի N 10 արտահերթ նիստի N 36-Ն որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների , ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 5000 /հինգ հազար/ դրամ .

բ/ սույն կետի «ա» ենթակետում չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 10000 /տաս հազար/ դրամ.

բբ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 10000 /տաս հազար/ դրամ .

բգ/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար .

գ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 / մեկ հազար հինգ հարյուր/ դրամ.

դ/ 20 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների , քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի / համար , եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների , վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

բ/ բացի օբյեկտի վերակառուցման , ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից , նախատեսվում է նաև կցակառույցների , վերնակառույցների , շենքի

հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն , ապա բացի սույն

կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի , կիրառվում են նաև նոր

շինության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի

Հանրապետության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավեացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների , շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում՝ստորգետնյա/ շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն ապա, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով , այն համարվում է նոր շինություն որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000/ հինգ հազար / դրամ:

4. Համայնքի տարածքում՝

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350/ երեք հարյուր հիսուն/ դրամ:

բ/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

գ/ Խանութներում տեխնիկական հեղուկի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը համայնքի տարածքում ընթացիկ տարվա համար սահմանվում է 30.000 /երեսուն հազար/ դրամ:

1. Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 5000 /հինգ հազար/ դրամ:
2. Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպելու դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 5000/հինգ հազար/ դրամ:

5. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները, /սաունաները / խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է.

ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25.000 /քսանհինգ հազար / դրամ.

բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 /հիսուն հազար / դրամ.

գ/ բաղնիքների և սաունաների համար՝ 200.000 /երկու հարյուր հազար/ դրամ.

դ/ խաղատների կազմակերպման համար՝ 500.000 / հինգ հարյուր հազար/ դրամ.

ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.

զ/ վիճակախաղերի կազմակերպման համար՝100.000 /մեկ հարյուր հազար / դրամ:

6. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 / մեկ հազար/ դրամ:

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավել ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր / դրամ.

գ/ այլ արտաքին գովազդի համար՝ 500 /հինգ հարյուր / դրամ.

դ/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 / յոթ հարյուր/ դրամ:

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 5000 /հինգ հազար/ դրամ:

8. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար՝ սահմանվում է 5000 /հինգ հազար / դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ՝

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար ՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 / հինգ հազար / դրամ:
2. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրաման և այլ նման աշխատանքների համար ՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 / երեք հազար/ դրամ :

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 10.000 /տաս հազար/ դրամ:

4. ,,Մանկապարտեզ" /ՀՈԱԿ/ համար ծնողական վճար սահմանել յուրաքանչյուր երեխայի համար ամիսը 3000 / երեք հազար / դրամ:

5.,, Երաժշտական դպրոց " /ՀՈԱԿ / ամսական վճար սահմանել՝ դաշնամուրի , վոկալի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր / դրամ, ժող. գործիքների խմբերի մասնակիցների համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ, իսկ ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար՝ անվճար:

6. Գոբելենի և դիզայներական խմբերի համար ամսական վճար սահմանել 1500-ական դրամ: Անապահով ընտանիքների երեխաների ուսուցումը կազմակերպել անվճար:

7. Խմելաջրի մատակարարման համար դրույքաչափը՝ յուրաքանչյուր տան համար սահմանել ամսական 1000 /մեկ հազար/ դրամ, սահմանել արտոնություն՝ համայնքում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքների համար սահմանված վճարի 50%-ի չափով:

8. Համայնքի վարչական տարածքում գործող կազմակերպությունների աղբահանությունն իրականացնելու համար տեղական տուրքի դրույքաչափ սահմանել 1 քմ-10 դրամ:

9. Համայնքի վարչական տարածքում գործող խանութների, դեղատների, հանդիսությունների սրահների, ավտոմեքենաների լվացման կետերի համար սահմանել տեղական տուրքեր և վարձավճարներ, հետևյալ կարգով.

ա/ Խանութների համար – 24.000 դրամ

բ/ Դեղատների համար - 36.000 դրամ

գ/ Հանդիսությունների սրահների համար՝ – 150.000 դրամ

դ/ Ավտոմեքենաների լվացման կետերի համար –12.000 դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ